ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՖԱՐՈՖՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 67- 68 (16263) ՇԱԲԱԹ, 23 ՕԳՈՍՏՈՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ ԱՆԵԼ»

Օգոստոսի 21-ին երկօրյա պաշտոնական այցով Երեւանում էր գտնվում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Պատվիրակության կազմում էին Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Կախի Կալաձեն, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Նինո Կոբախիձեն, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:

Օդանավակայանում Վրաստանի վարչապետին եւ նրան ուղեկցող անձանց դիմավորեցին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, կառավարության անդամներ, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Օգոստոսի 22-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն ընդունեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Հայաստանի նախագահը ողջունեց վարչապետի կարգավիճակով Իրակլի Ղարիբաշվիլու առաջին այցը Հայաստան՝ միջպետական հարաբերությունների ամրապնդման գործում կարեւորելով բարձրաստիճան պատվիրակությունների փոխայցելությունները, որոնք, Սերժ Սարգսյանի համոզմամբ, լավ հնարավորություն են արագ արձագանքելու հայ-վրացական երկկողմ հարաբերություններում գոյություն ունեցող հարուստ օրակարգի տարրերի:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի ուղեկցությամբ, օդանավակայանից ուղեւորվեց Ծիծեռնակաբերդ: Իրակլի Ղարիբաշվիլին եւ Հովիկ Աբրահամյանը ծաղկեպսակներ դրեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրին եւ ծաղիկներ՝ անմար կրակի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը Վրաստանի վարչապետին ներկայացրեց Հայոց ցեղասպանության պատմությունը, այնուհետեւ Իրակլի Ղարիբաշվիլին եղեւնի տնկեց Ծիծեռնակաբերդի հիշատակի պուրակում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԱՎ ՕՐԻՆԱԿ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Օգոստոսի 21-ին Հայաստանի կառավարությունում կայացավ պաշտոնական այցով Հայաստան ժամանած Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած կառավարական պատվիրակության հետ հանդիպումը:

Երկու երկրների կառավարությունների ղեկավարների առանձնազրույցից հետո կայացավ ընդլայնված կազմով հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են վրաց-հայկական բարեկամական հարաբերություններին առնչվող հարցերի լայն շրջանակ:

Ողջունելով Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած պատվիրակությանը՝ Հովիկ Աբրահամյանը նշեց, որ Վրաստանի հետ հարաբերություններն առանձնահա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՅԼԵՐ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆԸ

Օգոստոսի 22-ին Հայաստանում պաշտոնական այցով գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամները հանդիպում ունեցան Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի հետ:

Հայաստանի Աժ նախագահը հայ-վրացական հարաբերությունների զարգացման գործում կարեւորեց Հայաստանի եւ Վրաստանի խորհրդարանների դերը եւ համագործակցությունը միջազգային կառույցներում:

Ըստ Աժ նախագահի՝ երկու երկրները պետք է ավելի ակտիվ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ ՀԱՆՁՆԵՑ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

Օգոստոսի 20-ին Վրաստանի նախագահի նստավայրում, Վրաստանում Հայաստանի նորանշանակ դեսպան Յուրի Վարդանյանն իր հավատարմագրերը հանձնեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն:

Հավատարմագրերի հանձնման արարողությանը հաջորդած առանձնազրույցի ընթացքում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, շնորհավորելով Յուրի Վարդանյանին Վրաստանում դիվանագիտական առաքելության մեկնարկի կապակցությամբ, հաջողություն մաղթեց նրան, եւ համոզմունք հայտնեց, որ իր առաքելությամբ դեսպանը նոր լիցք կհաղորդի երկու երկրների միջեւ առկա ավանդական բարեկամական հարաբերություններին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Հայաստանի դեսպանը վստահեցրեց, որ ինքը ջանք չի խնայի երկկողմ հարաբերությունների խորացման եւ ամրապնդման ուղղությամբ:

Երկուստեք անդրադառնալով վրաց-հայկական բազմաոլորտ հարաբերություններին՝ զրուցակիցները քննարկեցին դրանց հետագա զարգացման հնարավորությունները՝ այդ համատեքստում կարեւորելով բարձր մակարդակով ընթացող դինամիկ քաղաքական երկխոսությունը:

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ. ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒՄ

«ԳԱԶԱՄՈՒՂԸ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ Է ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

Վրաստանի Դարիալի կիրճում օգոստոսի 21-ին տեղի ունեցած սողանքի հետեւանքով փակ է Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը, ինչպես նաեւ Վերին Լարսի անցակետը, որը ջրածածկ է եղել: Փլուզման հետեւանքով Վրաստանի տարածքում վնասվել է Հյուսիսային Կովկաս-Անդրկովկաս մայրուղային գազատարը, ինչի հետեւանքով օգոստոսի 20-ին՝ ժամը 23:45-ից, ժամանակավորապես դադարեցվել է Հայաստան բնական գազի մատակարարումը:

Օգոստոսի 21-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եղավ տարերային աղետի գոտում:

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին արտակարգ հայտարարություն է տարածել Դարիալի կիրճում տեղի ունեցած տարերային աղետի կապակցությամբ: Հայտարարության մեջ նշված է, որ վարչապետը անձամբ չի կարող գտնվել աղետի գոտում, քանի որ պաշտոնական այցով մեկնելու է Հայաստան, սակայն ինքը մշտական կապ է պահպանում ճգնաժամերի կառավարման շտաբի հետ, հետեւաբար լրիվ տեղեկատվություն է ստանում կիրճում անցկացվող աշխատանքների վերաբերյալ: «Իմ հանձնարարությամբ, կառավարության անդամները մեկնել են աղետի գոտի: Այնտեղ են գտնվում չորս նախարարներ՝ Ճիկաիձեն, Խոկրիշվիլին, Շավլիաշվիլին, Խադուրին: Սկսվել են աղետի հետեւանքների վերացման աշխատանքներներ, որոնք տարվում են 24-ժամյա կարգով»,- ասված է վարչապետի հայտարարության մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Օգոստոսի 20-ին պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի տրանսպորտի եւ հաղորդակցությունների նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարար Արթուր Առաքելյանի գլխավորությամբ:

Հայաստանի պատվիրակությունը հանդիպում ունեցավ Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների առաջին փոխնախարար Գիորգի Ամաշուկելու, Վրաստանի ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտի ղեկավար Վաժա Փանչուլիձեի հետ:

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐ ԱՆԵԼ»

բեր խնդիրներին:

Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ հայ-վրացական հարաբերությունները գտնվում են պատմականորեն ամենաբարձր մակարդակում, եւ դա հնարավորություն է տալիս հանգիստ, անկաշկանդ քննարկելու ցանկացած հարց՝ կապված ոչ միայն երկկողմ հարաբերությունների, այլ նաեւ տարածաշրջանային խնդիրների հետ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Վրաստանի վարչապետը նշեց, որ Հայաստան է ժամանել եւս մեկ անգամ հավաստելու իր խորը հարգանքը Հայաստանի, Հայաստանի նախագահի եւ հայ ժողովրդի հանդեպ, ավելի ամրապնդելու եւ նոր որակ հաղորդելու վրաց-հայկական հարաբերություններին:

Իրակլի Ղարիբաշվիլին համակարծիք է Հայաստանի նախագահի հետ, որ երկկողմ հարաբերությունները ներկայումս շատ բարձր մակարդակի վրա են, եւ նման հանդիպումներն ավելի կսերտացնեն երկու պետությունների միջեւ կապերը: Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց, որ մշտապես ասել է եւ այժմ էլ կրկնում է՝ Հայաստանը ոչ միայն Վրաստանի հարեւանն է, այլեւ բարեկամ պետություն: Նրա համոզմամբ, այդ բարեկամական հարաբերություններով երկու երկրների բարեկեցության համար պետք է առավել օգտակար ու բարի շատ գործեր անել: Վարչապետը գոհունակությամբ խոսեց պաշտոնական այցի օրերին Հայաստանում իր եւ իր գլխավորած պատվիրակության նկատմամբ ցուցաբերվող ջերմ վերաբերմունքի մասին, որը, նրա խոսքով, միայն բարեկամի կողմից կարող է դրսեւորվել:

Իրակլի Ղարիբաշվիլին Սերժ Սարգսյանին ներկայացրեց այցի շրջանակներում Երեւանում ունեցած հանդիպումների, քննարկումների արդյունքները, ձեռքբերված պայմանավորվածությունները:

Հայաստանի նախագահի հետ Վրաստանի վարչապետը քննարկել է վրաց-հայկական հարաբերությունների օրակարգային հարցերը, նաեւ՝ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները գոհունակությամբ նշեցին 2014թ. հունիսի 18-ին Հայաստանի նախագահի Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում ձեռքբերված պայմանավորվածությունը՝ Բագրատաշեն-Սադախլու անցակետում նոր կամրջի շինարարության մասին, որը կողմերն անվանել են «Բարեկամության կամուրջ»: Երկուստեք վերահաստատվել է կամրջի շինարարությունն արագացնելու հանձնառությունը:

Հանդիպումից հետո, ի պատիվ Վրաստանի վարչապետի եւ նրա գլխավորած պատվիրակության, Հայաստանի նախագահի նստավայրում տրվեց աշխատանքային ճաշ:

ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՅԼԵՐ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

համագործակցեն, նախագծեն ու իրականացնեն համատեղ նոր ծրագրեր: Անդրադառնալով հայ-վրացական բազմադարյան բարեկամությանը՝ Գալուստ Սահակյանը նշեց, որ հաջորդ տարի լրանում է Հայոց ցեղասպանության ոգեկոչման հարյուրամյա տարելիցը, եւ պատմության դասերը չեն առնչվում միայն հայ ժողովրդին, այլ վերաբերում են նաեւ մյուս ժողովուրդներին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ վրացական պատվիրակության այցի նպատակն է առավել զարգացնել հարեւան երկրի հետ բարիդրացիական հարաբերությունները եւ նպաստել տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը: Նա կարեւորեց Վրաստանի եւ Հայաստանի խորհրդարանների համագործակցության խորացմանն ուղղված քայլերը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Սահմանված արարողակարգի համաձայն, օգոստոսի 19-ին, Վրաստանում Հայաստանի նոր դեսպան Յուրի Վարդանյանը Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեին փոխանցեց իր հավատարմագրերի պատճենը:

Վրաստանի ԱԳ նախարարությունում կայացած արարողությունից հետո տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում Մայա Փանջիկիձեն եւ Յուրի Վարդանյանը քննարկել են երկկողմ համագործակցությանն առնչվող արդիական մի շարք հարցեր, ինչպես նաեւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու՝ օգոստոսի 21-22-ը Հայաստան կատարելիք այցի նախապատրաստության ընթացքը:

ԿՐԹԱԿԱՆ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Թբիլիսիում անցկացվեց ազգային ուսումնական ծրագրի զարգացման հեռանկարի մասին խորհրդաժողով, որտեղ քննարկվեցին ընդհանուր կրթության զարգացման եւ ազգային ուսումնական ծրագրի հեռանկարները: Միջոցառմանը ներկա էր կրթության նախարար Թամար Սանիկիձեն:

Խորհրդաժողովին ներկա էին նաեւ ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բուհերի ռեկտորներ, դպրոցի տնօրեններ, մանկավարժներ, կրթական համակարգի այլ կառույցների ներկայացուցիչներ: Ներկայացվեցին ազգային ուսումնական ծրագրի արդի կանխագծումները, միջազգային ենթատեքստով ուսումնական ծրագրի ներդրման ռազմավարությունը, ծրագրի մոնիտորինգի արդյունքները եւ ծրագրի դերի որակի բարելավման խնդիրները: Ինչպես հայտարարեց կրթության նախարարը, խորհրդաժողովի հրատապությունը պայմանավորված է այն փոփոխություններով, որոնք իրականացվում են ուսումնական ծրագրում:

Կրթության նախարարի հայտարարությամբ, դպրոցներում սկսվում է ծնողների կրթական նախագիծը: Նրա խոսքերով, ինկլյուզիվ եւ հատուկ կրթություն պահանջող երեխաների ծնողների համար կգործեն դասընթացներ, որտեղ նրանց կսովորեցնեն, թե ինչպես են հետեւելու երեխաներին եւ ինչպես են մասնակցելու նրանց կրթական գործընթացին: «Այս տարի առաջին անգամ ազգային ուսումնական ծրագրում նշում է արվել այն մասին, թե ինչպես պետք է կառուցվեն հարաբերությունները ծնողների եւ դպրոցի միջեւ, մանկավարժների, դասղեկների միջեւ»,- նշեց Թամար Սանիկիձեն: Նախարարի հավաստմամբ, կշարունակվեն դպրոցների հոգաբարձական խորհուրդների նախապատրաստման աշխատանքները:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԸ ԿԳՈՐԾԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՑ

Մանկապարտեզները իրենց գործունեությունը կսկսեն սեպտեմբերի 8-ից: Ինչպես տեղեկացրել է քաղաքապետարանը, այդ օրը իրենց աշխատանքը կսկսեն մայրաքաղաքի բոլոր մանկապարտեզները:

Միաժամանակ քաղաքապետարանը քայլեր է ձեռնարկում նոր մանկապարտեզների բացման ուղղությամբ: Թբիլիսիի սակրեբուլոյի կրթության եւ մշակույթի հանձնաժողովի նախագահ Թամար Թալիաշվիլին, մեծամասնական պատգամավորներին առաջարկել է շրջանների վարչությունների ղեկավարների հետ միասին քաղաքում գտնել այնպիսի վայրեր, որտեղ հնարավոր կլինի բացել նոր մանկապարտեզներ: Ըստ Թալիաշվիլու, նախադպրոցական հաստատությունների կապակցությամբ, Թբիլիսիում ծանր իրավիճակ է: «Այդ հիմնախնդիրն առանձնակի մոտեցում է պահանջում: Մանկապարտեզների անբավարարությունը վերաբերում է գործնականում բոլոր թբիլիսցիներին: 2010-2012 թվականներին քաղաքում փակվել էր 46 մանկապարտեզ, դուրս էին մնացել հազարավոր երեխաներ: Մենք ծրագրում ենք կառուցել նոր մանկապարտեզներ նոր չափորոշիչներով, սակայն դրա համար ժամանակ է պահանջվում է: Մենք հանդես ենք գալիս նախաձեռնությամբ. սակրեբուլոյի մեծամասնական պատգամավորները շրջանների ղեկավարների հետ միասին պետք է գտնեն համապատասխան տարածքներ, որտեղ որոշակի վերանորոգումից հետո հնարավոր կլինի բացել մանկապարտեզներ»,- հայտարարեց Թամար Թալիաշվիլին: Նրա խոսքերով, հարկ է լուծել նաեւ շուրջօրյա մանկապարտեզների հարցը:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԳՆԴԱԿՈՃՎԵԼ Է ԽԱՂԱՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՎՏՈՇԱՐԱՍՅՈՒՆԸ

Լուգանսկի մարզից անվտանգ վայր տեղափոխվող խաղաղ բնակիչների ավտոշարասյունը ծայրահեղականների կողմից ենթարկվել է գնդակոծման: Արդյունքում զոհվել է մի քանի տասնյակ մարդ: Այս մասին հայտարարել է Ուկրաինայի ազգային անվտանգության եւ պաշտպանության խորհրդի մամուլի խոսնակ Անդրեյ Լիսենկոն: Նրա խոսքերով, ուկրանիացի ուժայինները շարունակում են առաջ շարժվել դեպի Դոնեցկի վեց քաղաքներ: Ուժայինները փորձում են վերահսկողություն հաստատել Դոնեցկի, Լուգանսկի, Գորլովկայի, Պերվոմայսկի, Իլովայսկի եւ Կրասնի Կլուչ շրջաններում: Ուժայիններն իրենց վերահսկողության տակ են պահում նաեւ մոտակա բարձունքներից մեկը:

ԵՄ

ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Եվրամիությունը պատրաստակամություն է հայտնել նոր պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի դեմ՝ կախված նրանից, թե ինչպես կզարգանան հետագա իրադարձությունները Ուկրաինայում:

«Եվրամիության խորհուրդը Եվրահանձնաժողովի եւ Ընդհանուր անվտանգության եւ արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի հետ համատեղ շարունակում են հետեւել Ուկրաինայում իրադարձությունների զարգացմանը եւ գնահատել Ռուսաստանի դեմ իրականացված քայլերը՝ պատրաստ լինելով նոր քայլեր ձեռնարկել ընդդեմ Ռուսաստանի»,- ասված է Եվրամիության խորհրդի տարածած հայտարարության մեջ:

ԹՈՒՐՔԻԱ

ԷՐԴՈՂԱՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՆԱԽԱԳԱՀ

Թուրքիայի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հաստատել է գործող վարչապետ, իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության առաջնորդ Ռեջեփ Թայիփ Էրդողանի օգոստոսի 10-ին անցկացված նախագահական ընտրություններում նախագահ ընտրվելու մասին պաշտոնական փաստաթուղթը:

Ըստ քվեարկության արդյունքների, Էրդողանը հավաքել է ընտրողների 51,74 տոկոս քվեներ, ընդդիմության միասնական թեկնածու Էքմելեդդին Իհսանօղլուն՝ 38,49 տոկոս քվեներ, մոտ 20 մլն թուրքաբնակ քրդերի թեկնածու Սալահեթդին Դեմիրթաշը՝ 9,77 տոկոս քվեներ:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից ներկայացվել է որպես վարչապետի թեկնածու:

ՀԱՄԱՃԱՐԱԿ

ԷԲՈԼԱՅԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ԱՃՈՒՄ Է

Արեւմտյան Աֆրիկայի երկրներում էբոլա տենդի բռնկման հետեւանքով արդեն մահացել է 1350 մարդ, հաղորդել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ):

Ըստ որում, մահացածներից 576-ը Լիբերիայի բնակիչներ են: Ավելի վաղ «Բժիշկներ առանց սահմանների» միջազգային կազմակերպությունը քննադատել է ՄԱԿ-ի եւ Առողջապահության համաշխարհային կազմակերպության հակազդումը էբոլա տենդի տարածմանը՝ այն համարելով զրոյական:

Կազմակերպության տնօրեն Բրիս դե լա Վինը հայտնել է, որ «Բժիշկներ առանց սահմանների»-ն փաստորեն ստիպված է իր ուժերով պայքարել համաճարակի դեմ:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐՑՈՎ

Օգոստոսի 18-ին հայտնի դարձավ, որ դադարեցվել է Վրաստանի պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ «Ազգային անվտանգության խորհրդի մասին» օրգանական օրենքում կատարվող փոփոխությունների օրինանախագծի մշակման աշխատանքը:

Վերոնշյալի կապակցությամբ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ օրենսդիր մարմնի անդամներին, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին եւ փորձագետներին ներկայացրեց ազգային անվտանգության խորհրդի հարցով իր հայեցակետը: Երկրի նախագահի հետ միասին, հանդիպմանը, որն անցավ հարց ու պատասխանի կարգով, ներկա էր անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին:

Վրաստանի նախագահը խոսեց սահմանադրական փոփոխությունների ֆոնի վրա ազգային անվտանգության խորհրդի գործառույթների մասին: «Մենք կրկին ընդգծում ենք, որ ազգային անվտանգության խորհուրդը հանդիսանում է Վրաստանի սահմանադրական կառույցի մի մասը: Այդ մարմնի արդյունավետ գործառույթն ապահովում է ընդունած քաղաքական կարեւորագույն որոշումների, ինչպիսիք են խաղաղության, պատերազմի, հաշտության հայտարարման, այլ երկրի տարածք զինված ուժերի առաքման, ինքնակառավարման այս կամ այն միավորի գործառնության դադարեցման, արկտակարգ իրավիճակի հայտարարման, քաղաքացիների իրավունքի որոշման կատարումը»,- հայտարարեց Մարգվելաշվիլին:

Ինչպես մինչ այդ հայտարարել էր Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, անվտանգության խորհրդի կառույցի փոփոխությունների մասին խոսակցություններ չեն եղել: Վարչապետի պարզաբանմամբ, եթե օրենքում կատարվում են փոփոխություններ, ապա դա զուտ տեխնիկական հարցեր են: «Անվտանգության խորհուրդը եւ պետական մյուս ինստիտուտները, որոնք ունեն նշանակալի գործառույթներ, կշարունակեն գործել նոր սահմանադրության շրջանակներում: Եթե ճշգրտումների կարիք կա, ապա օրենքում կկատարվեն փոփոխություններ, որոնք զուտ տեխնիկական բնույթի են»,- հայտարարեց վարչապետը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՄՆ-Ի ՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է»

ԱՄՆ-ի հետ գործընկերությունը Վրաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է, հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Բաթումիում կայացած հանդիսավոր ընդունելության ժամանակ, որը տեղի է ունեցել ամերիկյան Vella Gulf հածանավում:

«ԱՄՆ-ի հետ գործընկերությունը մեր երկրի արտաքին քաղաքականության գլխավոր գերակայություններից մեկն է... ԱՄՆ-ի հովանավորությամբ այսօր մեզ մոտ ստեղծված են լավագույն զինվորական ստորաբաժանումները, որոնք իրենց ավանդն են ներդնում Աֆղանստանում միջազգային խաղաղության հաստատման գործում»,- ընդգծեց Ղարիբաշվիլին:

ԱՄՆ-ի ռազմածովային նավատորմի Vella Gulf հրթիռակիր հածանավը Բաթումիի նավահանգիստ է ժամանել օգոստոսի 18-ին: Բարեկամական այցի նպատակն է, այց, որը կտեւի մինչեւ օգոստոսի 20-ը, պրոֆեսիոնալ եւ մարդկային հարաբերությունների խորացումը ԱՄՆ-ի եւ նրա դաշնակից ու գործընկեր երկրների հետ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ ՄՈՏ 1 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐ

Ճշգրտված տվյալներով, 2013 թվականին Վրաստան կատարած օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 942 միլիոն դոլար, ինչը 3 տոկոսով գերազանցում է նախնական կանխագծումը եւ 3,3 տոկոսով 2012 թվականի ցուցանիշները:

Վիճակագրության ծառայության տվյալներով, նույն ժամանակահատվածում վերաներդրման ծավալը կազմել է անմիջական օտարերկրյա ներդրումների 29 տոկոսը: Խոշոր ներդրողների բաժինը կազմել է 82 տոկոս:

Անմիջական օտարերկրյա ներդրումների ծավալով առաջին տեղը գրավում է Հոլանդիան՝ 16 տոկոս, ապա հետեւում են Լյուքսեմբուրգը՝ 15 եւ Չինաստանը՝ 10 տոկոս:

Վիճակագրության ծառայության տվյալներով, 2014 թվականի հուլիսին Վրաստան է փոխանցվել 136,9 միլիոն դոլար, ինչը 0,5 միլիոնով կամ 0,4 տոկոսով գերազանցում է անցյալ տարվա հուլիսի ցուցանիշը: Դրամական փոխանցումների 93,2 տոկոսը բաժին է ընկնում այն դոնոր խոշոր 12 երկրներին, որտեղից դրամական փոխանցումները գերազանցել են 1 միլիոն դոլարին: Այդ երկրներից են՝ Ռուսաստանը՝ 53,0 միլիոն, Հունաստանը՝ 13,6 միլիոն, Իտալիան՝ 7,7 միլիոն, ԱՄՆ-ը՝ 5,3 միլիոն, Թուրքիան՝ 3,7 միլիոն եւ այլն:

Հուլիսին Վրաստանից արտասահման է փոխանցվել 15,2 միլիոն դոլար, անցյալ տարվա 13,7 միլիոնի դիմաց:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՔՐՔՐՎՈՒՄ Է ԴԱՎԻԹ ԲԱՔՐԱՁԵԻ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ

Վրաստանի գլխավոր դատախազությունը մտադիր է պարզել Մեծ Բրիտանիայում Դավիթ Բաքրաձեի բանկային հաշվի վրա գտնվող գումարների ծագումը:

Նշենք, որ լրատվամիջոցներով տեղեկատվություն է տարածվել այն մասին, որ Միասնական ազգային շարժման լիդերներից Դավիթ Բաքրաձեն եւ նրա տիկինը HCBS բանկի լոնդոնյան մասնաճյուղում փակել են 276849,89 ֆունտ ստեռլինգի (795 հազար լարի) հաշիվը, այն տեղափոխելով այլ հաշվի վրա: Լրատվամիջոցներում հրապարակվել են նաեւ փաստը հաստատող փաստաթղթեր: «Ի գիտություն հասարակության, ցանկանում ենք պարզաբանել, որ փաստաթղթերում նշված գումարը զգալիորեն գերազանցում է Դավիթ Բաքրաձեի եւ նրա ընտանիքի անդամների հռչակագրված եկամուտները: Ավելին, չնայած օրենքով սահմանված պահանջին, հռչակագրում ընդհանրապես չի նշվել բանկային հաշվի մասին տեղեկությունը: Հաշվի առնելով վերոնշյալը, Վրաստանի գլխավոր դատախազության հետաքննչական բաժինն սկսել է հետաքննությունը»,- ասված է գլխավոր դատախազության հայտարարության մեջ:

Իր հերթին՝ խորհրդարանական փոքրամասնության լիդեր Դավիթ Բաքրաձեն հայտարարեց, որ իր բոլոր եկամուտներն ու բանկային հաշիվներն օրինական են եւ չեն ստացվել ծառայական դիրքի շահարկումից: Նա պարզաբանումներ է կատարել նաեւ բրիտանական բանկում իր հաշվի վերաբերյալ: Նրա խոսքերով, 2002 թվականի նոյեմբերին Շվեյցարիայի դեսպանությունը գնել է իր անեղոջ՝ Լերի Մետրեւելուն պատկանող Կրծանիսիի փողոցում գտնվող մասնավոր տունը: Առքուվաճառքը ձեւակերպվել էր օրենքի պահանջներին համապատասխան: Դավիթ Բաքրաձեի պնդմամբ, հենց այդ գումարի մասին է խոսքը:

ՆԱԽԿԻՆ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄԵՐԺԵՑԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մերժեց Վրաստանի ՆԳ նախկին նախարար Կախա Թարգամաձեին հատուկ կարգով Վրաստանի քաղաքացիություն շնորհելը:



Երկրի ղեկավարն անընդունելի համարեց Թարգամաձեին կրկնակի քաղաքացիություն շնորհելը:

Հիշեցնենք, որ Կախա Թարգամաձեն Էդուարդ Շեւարդնաձեի կառավարությունում զբաղեցնում էր ներքին գործերի նախարարի պաշտոնը, վարդերի հեղափոխությունից հետո հեռացավ Վրաստանից եւ ապաստանեց Մոսկվայում: Այնտեղ նա հրաժարվեց Վրաստանի քաղաքացիությունից եւ ստացավ Ռուսաստանի քաղաքացիություն: Օրերս նա կրկնակի քաղաքացիության շնորհման հարցով դիմել էր Վրաստանի նախագահին:

Հիշեցնենք, որ քաղաքացիություն շնորհելու իրավասությունը պատկանում է երկրի նախագահին եւ նա, ելնելով երկրին ցուցաբերած ծառայություններից, անհատական կարգով ընդունում է որոշում քաղաքացիության շնորհման վերաբերյալ:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի պաշտպանության նախարարներն օգոստոսի 18-ին հանդիպեցին Նախիջեւանում: Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի նախարարներ Իրակլի Ալասանիայի, Զաքիր Հասանովի եւ Իսմեթ Յըլմազի եռակողմ հանդիպման շրջանակներում կողմերն այցելեցին մի քանի զորամասեր, ինչպես նաեւ Նախիջեւանի հուշարձաններ:

Ադրբեջանը, Թուրքիան եւ Վրաստանը մտադրվել են համատեղ եռակողմ զինավարժանքներ անցկացնել: Հանդիպման ժամանակ որոշվել է նաեւ երեք երկրների պաշտպանության նախարարների նման ձեւաչափով հանդիպումներն անցկացնել 6 ամիսը մեկ:

ՖԻՏՈՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մոտ ապագայում Վրաստանում հնարավոր կլինի անցկացնել մթերքի ֆիտոսանիտարական անալիզը: Մոտ ժամանակներս ծրագրվում է Թբիլիսիում բացել հատուկ սարքավորումներով հագեցված լաբորատորիա: Ինչպես հայտարարեց գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, ֆիտոսանիտարական անալիզը անցկացնել կլինի տարեվերջից: Նշենք, որ, ներկա դրությամբ, երկրում գործող լաբորատորիաները չեն կարող անցկացնել նման անալիզը, եւ դրա ստացման համար նմուշներն առաքվում են արտասահման:

ԳՐԱՆՑՎԵԼ ԵՆ ՂՐԻՄ-ԿՈՆԳՈՅԻ ԱՌԱՋԻՆ ՁՈՀԵՐԸ

Վերջին մի քանի օրերի ընթացքում Խաշուրիի շրջանում լաբորատորական կարգով վավերացվել է Ղրիմ-Կոնգո հեմարոգենիկ ջերմի հիվանդության 12 դեպք, որոնցից 3-ն ավարտվել են մահով: «Իրավիճակն այնքան բարդ է, որ կարող ենք ասել, որ գործ ունենք վարակիչ սուր հիվանդության համաճարակային բռնկման հետ»,- հայտարարեց Խաշուրիի շրջանի հասարակական առողջապահության կենտրոնի տնօրեն Դավիթ Չիքովանին: Նրա խոսքերով, ընդհանուր առմամբ, Վրաստանում այս տարի վավերացվել է Ղրիմ-Կոնգոյի հիվանդության 15 դեպք, որից 12-ը՝ Խաշուրիի շրջանում:

Հիշեցնենք, որ ավելի շուտ, մեկ տարվա ընթացքում Վրաստանում վավերացվել է ընդամենը երեք դեպք:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՇԱՔԱՐԻ ԷԺԱՆԱՑՈՒՄ

Միջազգային շուկայում շաքարը էժանանում է: Թեպետ Վրաստանում այդ նվազեցումն արտահայտվել է միայն երկու թեթրի էժանացմամբ:

Առեւտրական ցանցում եւ սուպերմարկետներում 1կգ շաքարի գինը կրկին 1,40 լարի է: Միջազգային շուկայում մեկ տոննա շաքարի արժեքը նվազել է մինչեւ 439 դոլար: Հաշվի առնելով լարիի փոխանակման կուրսը եւ հաշվի առնելով հավելյալ արժեքի հարկը, մեկ կիլոգրամ շաքարի մեծածախ գինը Վրաստանում մոտավորապես 90 թեթրի է: Ելնելով դրանից, վերլուծաբանների հաշվարկումներով, շաքարի գինը պետք է նվազեր առնվազն 20 թեթրիով:

Ագարայի շաքարի մեկ կիլոգրամի մեծածախ գինը նվազել է 2 թեթրիով (մեկ տոննա՝ 20 լարի) եւ դրա մեծածախ արժեքը կազմում է 1,28 լարի:

Նշենք, որ տարեկան տեղական պահանջարկը կազմում է շուրջ 100 միլիոն շաքար:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԱՎ ՕՐԻՆԱԿ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տուկ նշանակություն ունեն Հայաստանի համար: «Մեր երկու երկրների բարեկամությունն անցել է ժամանակի փորձության միջով, եւ այսօր այն կայուն հիմք է համագործակցության եւ փոխվստահության ոգով մեր հարաբերություններն է՛լ ավելի ամրապնդելու եւ զարգացնելու համար: Վրաստանի հետ հարաբերությունների հետագա զարգացումը մեր քաղաքական օրակարգի հիմնական առաջնահերթություններից է, եւ Հայաստանի կառավարությունը գործադրելու է բոլոր ջանքերը, որպեսզի մեր երկկողմ հարաբերություններն ավելի ամրապնդվեն»,- նշեց Հովիկ Աբրահամյանը:

Իր հերթին, Իրակլի Ղարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց հրավերի համար եւ ընդգծեց, որ Վրաստանը եւս շահագրգռված է Հայաստանի հետ կապերի խորացման եւ ընդլայնման գործում: Վրաստանի վարչապետը նշեց, որ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 42 տոկոսով: «Վստահ ենք, որ առկա է երկկողմ տնտեսական կապերն է՛լ ավելի զարգացնելու մեծ ներուժ», - ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Հովիկ Աբրահամյանը եւ Իրակլի Ղարիբաշվիլին պայմանավորվածություն են ձեռք բերել առաջիկայում Թբիլիսիում կազմակերպել վրաց-հայկական բիզնես ֆորում, որը կնպաստի երկկողմ գործարարների միջեւ համագործակցության սերտացմանն ու ընդլայնմանը: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել նաեւ նոր թափ հաղորդել վրաց-հայկական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքներին, որի վերջին նիստը տեղի է ունեցել 2011 թվականին:

Հայաստանի կառավարության ղեկավարն, անդրադառնալով ինտեգրացիոն գործընթացներին, հիշեցրեց, որ Հայաստանը քայլեր է ձեռնարկում Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու ուղղությամբ: Միաժամանակ, վարչապետը նշեց, որ Հայաստանը շարունակելու է ակտիվ համագործակցությունը ԵՄ-ի հետ՝ տարբեր բնագավառներում բարեփոխումների գործընթացին նոր ուժ հաղորդելու նպատակով: Հովիկ Աբրահամյանն ընդգծեց, որ ԵՏՄ-ին անդամակցությունը որեւէ կերպ չի անդրադառնա նաեւ Վրաստանի հետ գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունների վրա: Հովիկ Աբրահամյանի խոսքով՝ Հայաստանն ու Վրաստանը կարող են օգուտ քաղել տարբեր ինտեգրացիոն միավորներին անդամակցելու հանգամանքից:

Իր հերթին, Իրակլի Ղարիբաշվիլին վստահություն հայտնեց, որ երկու երկրների՝ տարբեր ինտեգրացիոն միավորներին անդամակցությունը որեւէ արգելք չի հանդիսանա վրաց-հայկական տնտեսական, քաղաքական, մշակութային համագործակցության վրա: Վրաստանի վարչապետը նշեց, որ տարբեր միավորումներին անդամակցության հնարավորությունը Վրաստանն ու Հայաստանը պետք է կարողանան օգտագործել ի օգուտ երկու երկրների: Իրակլի Ղարիբաշվիլու համոզմամբ, դա լավ օրինակ կհանդիսանա միջազգային հանրության համար:

ՆՈՐ ԿԱՄՈՒՐՋԸ ԿԿՈՉՎԻ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ»

Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերի հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք վերաբերել են առեւտրատնտեսական կապերի, կրթության, մշակութային, մարդասիրական ոլորտներում համագործակցությանը: Այս մասին օգոստոսի 21-ին Երեւանում հանդիպումից հետո լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ հայտարարեց Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Նա տեղեկացրեց, որ քննարկումներ են եղել սահմանային անցակետերի արդիականացման շուրջ: «Մասնավորապես, պայմանավորվածություն ենք ձեռք բերել Բագրատաշեն-Սադախլո նոր կամուրջի շինարարության վերաբերյալ: Քննարկեցինք նաեւ անցած գիշեր Լարսում տեղի ունեցած սողանքի հետեւանքների վերացման հետ կապված հարցեր: Ես իմ գործընկերոջն առաջարկեցի Հայաստանի համապատասխան ծառայությունների աջակցությունը»,- ասաց Հայաստանի վարչապետը:

Երկուստեք կարեւորեցին նաեւ պատմամշակութային հարուստ ժառանգության պահպանման եւ վերականգնման խնդիրները:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին իր հերթին շնորհակալություն հայտնեց հյուրընկալության եւ ջերմ ընդունելության համար եւ նշեց, որ ուրախ է Հայաստանում լինելու հրավեր ստանալու համար: «Ինձ համար ուրախալի է լինել Հայաստանում, որի հետ մեզ կապում է բազմադարյա բարեկամությունը: Մենք բանակցությունների արդյունքում համաձայնության եկանք, որ պետք է ավելի խորացնենք Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա սերտ համագործակցությունը բոլոր ոլորտներում:

Նա ընդգծեց, որ քննարկումներ են եղել նաեւ տարածաշրջանում կայունության եւ անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ: «Պետք է նշեմ, որ մենք ունենք դինամիկ աճ նաեւ զբոսաշրջության ոլորտում եւ համաձայնության ենք եկել, որ կխորացնենք հարաբերությունները նաեւ այս հարցում: Մենք նաեւ պայմանավորվել ենք Բագրատաշեն անցակետում նոր կամուրջի կառուցման վերաբերյալ: Եվ ես իմացա, որ մեր հայ գործընկերների կողմից առաջարկ կա այն կոչել «Բարեկամության կամուրջ»: Ես սիրով տվեցի իմ համաձանությունը: Մենք քննարկել ենք նաեւ մշակութային եւ մարդասիրական կապերի ամրապնդման հետ կապված հարցեր»,- եզրափակեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Զրուցակիցները քննարկել են նաեւ Երեւան-Թբիլիսի եւ Երեւան-Բաքուի թռիչքների կանոնավոր չվերթերի գործարկման, ինչպես նաեւ մշակութային բնագավառում երկկողմ փոխգործակցությանն առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտին Իրակլի Ղարիբաշվիլին Հովիկ Աբրահամյանին հրավիրեց Վրաստան:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ 2-3 ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ»

Վրաստանի իշխանությունները խոստանում են 2-3 օրվա ընթացքում վերականգնել Հայաստան գազ մատակարարող խողովակաշարը, որը վնասվել է Լարսում տեղի ունեցած սողանքի հետեւանքով, եւ վերականգնել գազամատակարարումը: Այս մասին Հայաստանի վարչապետի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: «Հովիկ Աբրահամյանը հանդիպման ընթացքում խոսեց նաեւ անցած գիշեր Լարսում տեղի ունեցած սողանքի հետեւանքով հայ-վրացական գազատարի վերականգնման վերաբերյալ: Մենք խոստանում ենք 2-3 օրվա ընթացքում վերականգնել գազամատակարարումը»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հրավերով Հայաստան այցելած Վրաստանի պաշտոնական պատվիրակության կազմում Երեւանում էր նաեւ Վրաստանի էներգետիկայի նախարար, փոխվարչապետ Կախի Կալաձեն:

Օգոստոսի 21-ին, Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում կայացավ Վրաստանի եւ Հայաստանի նախարարների հանդիպումը: Հանդիպումից հետո Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը տեղեկացրեց, որ գործընկերոջ հետ քննարկել են էներգետիկայի ոլորտում երկու երկրների համագործակցության հեռանկարներն ու խնդիրները: Նրա խոսքով, առաջիկա կարեւորագույն ծրագրերից մեկը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ էներգամատակարարման ծավալների մեծացման ծրագիրն է, համաձայն որի՝ ներկայիս 200 մգվտ թողունակությունը հնարավոր կլինի հասցնել 700 մգվտ-ի, կառուցվելիք 400 կվտ բարձ լարման գծի եւ հաստատուն հոսանքի ներդիրի շնորհիվ:

Նախարարը կարեւորել է նաեւ վթարային իրավիճակների պայաններում երկու երկրների միջեւ էներգետիկ համագործակցության փորձը, եւ շնորհակալություն հայտնել վրացական կողմին գազատարի վթարների ընթացքում Հայաստանին օգնություն ցուցաբերելու համար:

Ի դեպ, վերջերս Վրաստանում եւս տեղի ունեցավ էներգամատակարարման խափանում, որի ընթացքում Հայաստանն իր հերթին կարողացավ օգնության ձեռք մեկնել հարեւեւան երկրին:

Վրաստանի էներգետիկայի նախարարը շնորհակալություն հայտնեց հայ գործընկերներին համագործակցության համար եւ կարեւորեց Վրաստան-Հայաստան էներգետիկ կապերը: Նա նշեց, որ համագործակցությունն ընդլայնելու մեծ հնարավորություն կա եւ երկու կողմերն էլ գործնական են տրամադրված դրանք զարգացնելու համար:

Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գիծը կկառուցվի ոչ թե 400, այլ՝ 500 մեգավատտ լարման հզորությամբ: Այս պայմանավորվածության մասին Վրաստանի եւ Հայաստանի վարչապետեր Իրակլի Ղարիբաշվիլուն եւ Հովիկ Աբրահամյանին համատեղ հանդիպմանը տեղեկացրել են երկու երկրների էներգետիկ բնագավառների ղեկավարները՝ նշելով, որ դա կստեղծի էլեկտրաէներգիայի տարանցիկ մատակարարման եւ արտահանման լավ հնարավորություն: Մասնավորապես, էլեկտրահաղորդիչ գծի կառուցման առաջին փուլի ավարտից հետո Հայաստանից Վրաստան էլեկտրաէներգիայի տեղափոխման հզորությունը ներկայիս 200 մեգավատտի փոխարեն կհասնի 300-ի: ՀՀ կառավարությունը բանակցություններ է վարում գերմանական KfW բանկի հետ՝ երկրորդ փուլի աշխատանքները 2018 թվականին ավարտելու համար, ինչի արդյունքում էլեկտրաէներգիայի տեղափոխման հզորությունը կհասնի 700 մեգավատտի:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, իր գլխավորած պատվիրակության անդամների հետ այցելեց Երեւանի Մատենադարանը:

Վարչապետին ներկայացրին մատենադարանում պահվող, Վրաստանին եւ վրաց ժողովրդին վերաբերող հնագույն ձեռագրերը: Իրակլի Ղարիբաշվիլին գրանցում կատարեց մատենադարանի պատվավոր այցելուների մատյանում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Հայաստանում գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելեց Երեւանի կոնյակի գործարան: Վրացական պատվիրակությունը վարչապետի գլխավորությամբ Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանի ուղեկցությամբ շրջեց գործարանով՝ ծանոթացավ կոնյակի արտադրությանն ու գործարանի պատմությանը:

ՄԵԿՆՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻՑ

Օգոստոսի 22-ի կեսօրին ավարտվեց Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հրավերով Հայաստան ժամանած Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու պաշտոնական այցը:

Երեւանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում Հովիկ Աբրահամյանի, պաշտոնական այլ անձանց մասնակցությամբ տեղի ունեցավ Վրաստանի վարչապետի ճանապարհման պաշտոնական արարողությունը:

«ԱՐՄԵՆՊՐԵՍ» - «ՎՐԱՍՏԱՆ»